ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը՝**
   Մարտիրոս Նալբանդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիա (Բրյուսել), 2024թ.-ի մայիսի 29-ից մայիսի 31-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)՝ «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրների տարածաշրջանային 11-րդ կլոր սեղան-հանդիպմանը՝ նվիրված Ջրային ոլորտի ֆինանսական հարցերին:

6. **Քննարկված թեմաները.**

   Մասնակցել եմ տեղի են ունեցած բոլոր 6 թեմատիկ պանելային քննարկումներին՝ հետևյալ թեմաներով.

   1) ԵՄ ջրային օրենսդրության իրականացմանն ուղղված ներդրումների մասին որոշումների բարելավում,
   2) Քաղված դասեր՝ գնահատելու համար հնարավորություն ընձեռող միջավայրը Արևելյան գործընկերության երկրների ջրային անվտանգությանն ուղղված ներդրումների համար,
   3) Դեպի ֆինանսապես կայուն ջրային ոլորտ, տնտեսական գործիքների կիրառում և ռեֆորմներ,
   4) Կայուն ջրային կառավարման բարելավման ֆինանսական գնահատում. Հասանելիություն, մարտահրավերներ և նորարարական լուծումներ Արևելյան գործընկերության երկրների համար,
   5) Գետավազանային կառավարման պլանավորման ֆինանսավորում,
   6) Գորշից դեպի Կանաչ: ջրի կառավարման հարմարվողականության և ֆինանսավորման նոր մոտեցումներ Արևելյան գործընկերության երկրներում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպում և առանձնազրույց եմ ունեցել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)-ի ծրագրերի ավագ կառավարիչ պարոն Մեթյու Գրիֆֆիտսի հետ՝ քննարկելով հետագա հնարավոր համագործակցության շրջանակները և Հայաստանի ջրային համակարգերի ոլորտային հետազոտությունների առաջնահերթությունները, նպատակ ունենալով «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի հետագա փուլերում դրանց համատեղ հասցեավորումը: Ելույթ եմ ունեցել «Դեպի ֆինանսապես կայուն ջրային ոլորտ» պանելային քննարկման շրջանակներում, ներկայացնելով «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում կատարված ոլորտային հետազոտության արդյունքները և կիսվել Հայաստանի փորձով: Հանդիպման ավարտին հանդես եմ եկել նաև եզրափակիչ ելույթով՝ Հայաստանյան պատվիրակության անունից:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, պարտադիր կատարման ենթակա պայմանավորվածություններր ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկություն եմ ներկայացրել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) ծրագրերի ավագ կառավարիչ պարոն Մեթյու Գրիֆֆիտսին, որպեսզի ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին դիտարկեն առաջնային գործընկեր կառույց կամ կառույցներից մեկը Հայաստանից՝ նոր մեկնարկվելիք «ԵՄ-ն կլիմայական դիմակայունության համար» ծրագրի շրջանակներում, որի շնորհանդեսը և մեկնարկի մասին հայտարարությունը ներկայացվեց հանդիպման առաջին օրը:

Լրացուցիչ տեղեկատվություն.

Հանդիպմանը Հայաստանից հրավիրված էին ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչները: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից հանդիպմանը մասնակցում էին նախարարի տեղակալ պարոն Տ. Գաբրիելյանը և Ջրային ռեսուրսների քաղաքականության վարչության պետ տիկին Լ. Աբրահամյանը:

Բացի պետական կառույցների ներկայացուցիչներից, հայաստանյան պատվիրակության կազմում էին «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի ներկայացուցիչ պարոն Վ. Տոնոյանը և Բելգիայում Հայաստանի դեսպանության ներկայացուցիչ:

Հանդիպման մասնակից երկրներն էին՝ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան և Մոլդովան:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

Մ. Նալբանդյան, 06.06.2024թ.